

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԻՈՆԵՐԱԳԱՅՈՒՄ ՍԵՐԻԱ

Կ. ՄԱԿԱՎԵՅԵՎ

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ  
ԿԵՆԴԱՆԻ ԼՐԱԳՐԵՐ

07

15-18

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1927

19 JUN 2009  
19 JUN 2009

ԿՈՄՅԵՐԻՏ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

57  
U-18

Գ. ՄԱԿԱԳԵՏԵՎ

ՊԵՌԵՐԱԿԱՆ  
ԿԵՆԴԱՆԻ ԼՐԱԳՐԵՐ

Հայոց և ազգային



24 JUL 2013

14886

ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ  
(Հիմնական ցուցմունքներ)

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հաճախ կենդանի լրագրերի բեմադրությունը պիտոներների մոտ վոչ միայն հաջողությունն չի ունենում, այլ, ընդհակառակը, չափազանց վատ վերաբերմունք ե ստեղծում իր նկատմամբ։ Փոխանակ լրագրին ինչպես հետաքրքրական և, վոր գլխավորն ե, ոգտակար տեսարանի նայելու, յերեխաների մեջ հաստատվում ե այն կարծիքը, թե լրագրիը մի շատ ձանձրալի, պատահական, իրենց բոլորովին չհետաքրքրող մի բան ե։

Այդ բանն առաջ ե գալիս նրանից, վոր կենդանի լրագրի վրա աշխատող պիտոներներն իրենք նրա վրա նայում են ինչպես մի դատարկ բանի վրա և բեմադրության աշխատանքները հենց այնպես՝ մի կերպ լոլա լեն տանում, առանց լուրջ վերաբերմունքի ու հապճեպ։

№ 508

Գրառեպգր № 71 (Բ)

Տերություն 4000

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում



8645-53

Այդպիսի վերաբերմունքը դեպի լրագիրը՝  
գցում ե նրան պիոներների աչքում, և, իհարկե,  
այդպիսի լրագիրը նրանց, շատ իրավացի կեր-  
պով, անպետք ե թվում։ Այնինչ կենդանի  
լրագիրը յերեխաների թատերական յելույթների  
զվարակութեական մեջ պիտի լինի, վորով-  
հետեւ ամենից պայծառ, ամենից արագ կարող ե  
նա արձագանգել որվա վորմե գեպք, լուսաբա-  
նել պիոներական կյանքի վորմե հարց, տվալ  
կոլեկտիվի, գործարանի, գուողի և ազն կյանքը,  
վորը վոչ մի պիես անել չի կարող։ Պետք ե  
միայն բարձրացնել լրագրի վորակը, իսկ այդ  
դարկ կտա դեպի լրագիրն ունեցած հետաքրքր-  
ության։ Վորակը կարելի յե բարձրացնել՝ լրա-  
գրի վրա լուրջ աշխատելով միայն, այսինքն  
բոլորովին հրաժարվելով հապճեալ աշխատանքից։  
Ճիշտ ե, կենդանի լրագիրը չի կարելի բեմադրել  
 $1\frac{1}{2}$  – 2 ամիս։ այդ դեպքում ևս կորցնում ե իր  
այժմեյականությունը, յետ ե մնում կյանքի ան-  
ցուղարձից, հնանում ե։ Բայց նաև չի կարելի  
աշխատանքները ներկայացումից 2 – 3 որ առաջ  
սկսել։ Մենք գտնում ենք, վոր  $1\frac{1}{2}$  – 2 շաբաթը  
ամենափոքը ժամանակամիջոցն ե լրագիրը պատ-  
րաստելու, բայց այդ ժամանակամիջոցն ել բա-  
վարար կինոի միայն այն պայմանով, յեթե յերե-  
խաները շատ լուրջ և ուշագիր աշխատեն՝ հրա-

ժարգիրով կենդանի լրագրի վրա՝ իբրև մի գա-  
տարկ բանի վրա նայելուց, վոր լուրջ, խելամուտ  
վերաբերմունք չի պահանջում։

Այս գրքունիով հանձնարարված նյութի մա-  
սին պետք ե ասել, վոր պատանիները չպետք ե  
սահմանափակվեն միայն յեվ միայն դրանց ըե-  
մադրությամբ։ Ամբողջովին այս նյութով կազմվ-  
ած լրագրին իր նպատակին չի ծառայի, վորով-  
հետեւ նա բոլորովին չի շոշափի տեղական  
նշանակություն ունեցող մոմենտներ, կյանքը այն  
կազմակերպության, վորտեղնացոցարդպումե։ Այն-  
ինչ կենդանի լրագրի գլխավոր ինսդիրներից մեկն ե  
այդ։ Այսպիսի նյութ պետք ե պատրաստեն պատա-  
նիներն իրենք, յերգերի, պատմվածքների, քառյակ-  
ների, պատկերների և այլ ձևով։ Իսկ հանձնա-  
րարված նյութերը պետք ե ոգտագործել իբրև  
բեմադրական հավելված, ինչպես կենդանի լրա-  
գրի համարի բաժիններից մեկը։ Այս ավելի  
հաստատելու համար կարելի յե ասել, վոր այս  
նյութերը հենց իրենք հանդիսանում են Մոս-  
կվայի կոլլեկտիվերից մեկի ինքնաշխատ ստեղ-  
ծագործության արտադրանքը և պատրաստված  
են կոլվարի դեկավարությամբ։

Այս նյութերի յուրաքանչյուր բաժինը մի  
փոքրիկ բեմադրություն ե, այսինքն մի փոքրիկ  
պիես։ Նրանցից յուրաքանչյուրը բեմադրելու

համար պետք ե այն անել, ինչ արվում ե այս կամ այն պիեսը բեմադրելիս: Բեմադրությունը պետք ե տանել ամբողջ կոլեկտիվով, ընդհանուր աշխատանքի ծրագրում նախորոք ժամանակ հատկացնել փորձերին, այնպես, վոր կոլեկտիվի կամ ողակի վոչ մի աշխատանք նրանդ պատճառվ չխանգարվի:

Ծրագրի գործն ավելի դուրին տանելու համար յուրաքանչյուր համարին պետք ե կուլեկտիվից առանձնացնել աշխատանքները վարող մի ողակ, բայց կոլեկտիվի յուրաքանչյուր ողակին աշխատանքները վարող այսպիսի դեր տալ վոչ ավելի, քան 1—2 համարի համար, հերթով, վորովինետև այդ աշխատանքի համար մի ողակ առանձնացնելու և այդ աշխատանքը նրան յերկար ժամանակ կապելու դեպքում այդ ողակը թատերական խմբակի կփոխվի, իսկ այդ կքայքալի ողակի մուսա աշխատանքները: Բայց լրացրի համար աշխատանքները վարող մի ողակ առանձնացնելով, այնուամենանիվ, աշխատանքը պետք ե տանել ամբողջ կոլեկտիվով:

### ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Լինում են դեպքեր, յերբ յերեխաները, դեռ ինչպես հարկն ե նյութերին չծանոթացած, արդեն սկսում են փորձել: Այդ սխալ ե: Բեմի

վրա փորձերն սկսելուց առաջ փոքր, բայց կարևոր նախապատրաստական աշխատանք պետք ե կատարել:

1. Պետք ե, ինչպես հարկն ե, վերլուծել նյութերը, լավ հասկանալ, յուրացնել: Դրա համար անհրաժեշտ ե, վոր բեմադրությամբ բոլոր զբաղվողները հավաքվեն ու կարդան: Կարդալ կարող ե վորեւ մեկը, բայց ընթերցումից հետո բոլոր պետք ե մտքերի փոխանակություն ունենան, զրուցելով և քննադատելով նյութերը: Այդպիսով կարելի յե բոլոր պատանիների համար նյութը պարզ և հասկանալի դարձնել:

2. Անհրաժեշտ ե, վոր մասնակցողներից յուրաքանչյուրն արտագրի բոլոր սառերը, ասացվածքները, բանաստեղծությունները, յերգերը, վորոնք նա պիտի ասի կամ յերգի գործողության ժամանակ: Հաճախ արտագրությունն համարյա թե չի կատարվում, և այդ պատճառ ե դառնում, վոր պատանիները համարյա թե յերբեք չեն իմանում տեքստը: Արտագրությունից հետո պետք ե բոլոր արտագրածների ընթերցում կատարել բնագրի կարգով:

3. Նախապատրաստական աշխատանքների այս յերկու կետերը կզբաղեցնեն յերկու փորձ: Տանը, մինչև յերրորդ փորձը, պատանիները պետք ե ինքնուրույն, կերպով աշխատանք տա-

Նեն արտագրված տեքստը սովորելու վրա, վսրպեսզի, գալով հետեւյալ փորձին, տեքստը նրանց համար այնպես չլինի, վոր առաջին անգամն են լսում: Այդ աշխատանքը տանը պետք է տանել նաև հետագայում, նպատակ դնելով՝ չորրորդ-հինգերորդ փորձին ամեն մեկն իր խոսքերը բերանացի դիտենա: Ընդհանրապես պետք է կենդանի լրագրերի բեմադրության ժամանակ հուշարար չլինի: Յեթե տեքստը վատ են սովորել, ավելի լավ ե ներկայացումը հետաձգել, վորով-հետեւ, միևնույն ե, ներկայացումը փուստ կլինի: Հուշարարով չի կարելի ոգտվել այն ժամանակ, յերբ տեքստը միաժամանակ շատ յերեխաներ են ասում, նույնիսկ այն ժամանակ, յերբ մի մարդ ե արտասանում. լավ ե խուսափել հուշարարի հետ կապված աշխատանքից: Յերեխաների խաղը և արտասանությունը դա վոչ-կենդանի ու մեքենայական կդարձնի:

## ՇԱՐԺՈՒՄ

Այս նախապատրաստական աշխատանքներից հետո արդեն կարելի յե անցնել փորձերին՝ բեմի վրա, սկսել տեքստը շարժման մեջ դնել: Շարժումը պիոներական ներկայացումների մեջ շատ մեծ դեր է խաղում: Յերեխաների համար պատրաստած բեմադրություններին պետք է գործո-

ղության մեծ կենդանություն տալ, խուսափելով ստատիկայից, այսինքն՝ անշարժությունից, վորովինեաև անշարժ գործողությանը վատ են նայում պատահնի հանդիսականները: Նրանք ձանձրանում են, յեթե պիեսի կամ լրագրի խոշոր կտորների խաղը զուրկ է շարժունությունից: Բայց ավելորդ և անմիտ շարժումներ, վաղվըզոց և իրարանցում նույնպես պետք չեն: Պետք է շարժումն այնպես անել, վոր չկարվի տեքստից, վոր նրանից բղիքի, վոր մի գործող անձի շարժումը կապվի մուսի շարժումների հետ:

Միքանի դեպքերում հարցը շատ հասարակ է լուծվել. տեքստը սովորում են, իսկ շարժումն անում են այնպես, ինչպես պատահի: Այդ բանը նույնիսկ հասարակ պիեսի մեջ չի կարելի անել, իսկ կենդանի լրագրի մեջ այդ բոլորվին անթուլատրելի յե: Պետք է բոլոր շարժումներն սկզբից նշել և փորձի միջոցով լավ սովորել, այնպես վոր այդ շարժումները բոլորը միաժամանակ, կազմակերպված և ուղիղ կատարեն:

Կարիք չկա պիոներական կենդանի լրագրի մեջ, ինչպես շատերն են անում, զանազան բաւետային, ֆոկստրոտային պարեր (ինչպես նաև յերգեր այդ յեղանակներով) մտցնել: Պետք է ավելի աշխատել՝ գործողության մեջ առողջ, ֆիզկուլտուրական և մարմնամարզական սկզբունք-

ներ դնել, իհարկե, նույնպես առանց չափազանցության, ալինքն մարմնամարզությունից ոգտվելով այնտեղ, ուր այդ հարկավոր ե:

### ԽՄԲԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ

Կենդանի լրագրի մեջ միշտ ել շատ տեղեր են լինում, վորոնք կարդացվում են վոչ թե մի հոգու, այլ միանգամից շատերի, խմբական արտասանության միջոցով: Աշխատանքի այս մասի վրա պետք ե մեծ ուշադրություն դարձնել: Խմբական ընթերցման ամենաառաջին պայմանն այն ե, վոր բոլոր մասնակցողները խմբական ընթերցման բոլոր տեղերն անգիր պիտի իմանան:

Խմբական արտասանության համար պետք ե բոլոր մասնակցողներին բաժանել ըստ ձախների և աշխատել տեքստը բաժանել այնպես, վոր արտասանվելիս շարունակ չափի ամբողջ խմբի կողմից, միանգամից, այլ բաժանված լինի ըստ ձախների, համաձայն իր իմաստի. որինակ՝ կոշտ, ուժեղ, լեռանդում, բարձրականչ տողերը պետք ե տպաներին տալ կարդալու. կայտառ, ուրախ, յերաժշտական, բերկրախի, քնքուշ տողերը՝ աղջիկներին: Յեթե կարդացողները գտնեն, վոր վորեւ բառը, ասացվածքը կամ տողը պետք ե հատուկ ձևով առանձնացնել, այդ դեպքում պետք ե այն առանձնացնել խմբականից, սոլո արտասանել, այսինքն մեկի կողմից:

Խմբական արտասանության մեջ ավելի գլուխար աշխատանքն ե՝ կարողանալ ճիշտ արտահայտության լեզանակ գտնել ասացվածքի իմաստն արտահայտելու համար, տողերում և ասացվածքներում ճիշտ շեշտերը և դադարները տողի և ֆրագի մեջ: Պետք ե սովորել այնպես կարդալ, վոր լրագրի խմբական տեղերից հասարակ, ձանձրակի, միորինակ «արակտակոց» չստացվի: Այդ առաջանում ե նրանից, վոր խմբի բոլոր արտասանողները շատ միակերպ են ընդգծում իրենց ձախով բանաստեղծության լուրաքանչյուր շեշտված վանկը, առանց դադարների, բաց չթողնելով տողի միջի այն շեշտված վանկերը, վորոնք ընդգծում չեն պահանջում: Յուրաքանչյուր կարեոր և վոչ կարեոր շեշտի վրա նրանք ձայնի հավասար ճնշում են զործ դնում: Պետք ե լավ աշխատել, ճիշտ գտնել շեշտերն ու դադարները տողի մեջ, ճշտորեն բաժանել ասացվածքներն ըստ ձախների, և այն ժամանակ խմբական տեղերը բոլորովին այլ կերպ կհնչեն:

Բացի դրանից, պետք ե իմանալ հետևյալը:  
1) խմբական արտասանությունը պահանջում է չափազանց պարզ առողանություն, բոլոր բառերի ու տառերի ճիշտ արտասանություն: 2) Լավ սկսել և վերջացնել ասացվածքները, առանց ուտելու առաջին բառի առաջին վանկերը, և կուլ

տալու ասացվածքի վերջավորությունը: 3) Խուսափել բղավելուց ու ճշալուց: Պետք է խմանալ, վոր բարձր ասել, բացականչել՝ չի նշանակում բղավել կամ ճշար: 4) Խմբով կարդալու դեպքում անթուլպատրելի յեւ առանձին ձայների բաժանումը (որինակ՝ առաջին ձայն, յերկրորդ ձայն և այլն): Խմբական տեղերը պետք է հնչեն շատ ամբողջական և միահամուռ: 5) Փորձերի և ներկայացումների ժամանակ յուրաքանչյուր կարդացող պետք է ուշադիր և կենտրոնացած լինի. վոչ մի խանգարմունք, սանձարձակություն թուլատրելի չե: 6) Յեթե լրագրի ընթերցումը կատարվելու յեւ նվազակցությամբ, պետք է նախորոք լավ ծանոթանալ յերաժշտության:

### ՅԵՐԳԵՐ

Կենդանի լրագրի յերգերը նախ կարելի յեւ փորձել առանձին, անկախ տեքստից և խմբական արտասահնությունից, բայց ընդհանուր գործողության մեջ պետք է մտցնել՝ ներկայացումից առաջ կատարվող միքանի փորձերում: Յերգերի տեքստը պետք է լավ զիտնալ: Յերգերի յեղանակների համար կարիք չկա ոգտվել ֆոկատուտիին յեղանակներից, այլ բղինեցնել հեղափոխական, կոմյերիտական, պիոներական և ժողովրդական յերգերից:

### ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Յերաժշտությունը կենդանի լրագրի մեջ շատ մեծ նշանակություն ունի, փորովնետեւ մեծ տպագորություն եւ թողնում, կազմակերպում և շարժումները, գործողությունը, խոսքը: Պետք է համարյա բոլոր փորձերը կատարել նվազակցությամբ, վորպեսզի յերեխաները լավ ընտելանան նրան, վորպեսզի նրանք կարողանան յերգելիս իր ժամանակին սկսել, արագ վերցնել յերգի չափը, ընտելանալ յերաժշտության ոիթմին:

Չի կարելի ընտրել տարտամ, ճապաղ ոփթմով յեղանակներ: Այդպիսի յեղանակը յերեխաները լավ չեն լուրացնում և բոլորովին չի համապատասխանում կենդանի լրագրին: Ուժեղ, պարզ, առողջ յերաժշտություն ե պետք:

Լրագրի նվազակցությունն ավելի բազմազան և գունագեղ դարձնելու համար լավ կլինի շաշողական նվազախումբ կազմակերպել:

### ԳԼԽԱՎՈՐ ՓՈՐՁԸ

Նկարագրված բոլոր աշխատանքները պետք եւ բաժանել նախապատրաստական և սկզբնական փորձերի: Յերբ ամեն ինչ արված կլինի,— տեքստը՝ սովորած, շարժումները՝ նշած և փորձի յենթարկած, սոլո և խմբական կտորները՝ պատրաստված, այլ յերգերը, պարերը, յերաժշտու-

թյունը, հագուստները, դեկորացիաները, բեմի  
 կահավորությունը, լույսը և մի խոսքով՝ այն  
 ամենը, ինչ վոր հարկավոր ե՝ պատրաստված  
 լրագիրը հանդիսականներին ցուց տալու համար,—  
 նախքան ցուց տալը անհրաժեշտ ե լրիվ, այս-  
 պէս ասած, գլխավոր փորձ անել: Այդ նրա հա-  
 մար ե պետք, վոր ամբողջ աշխատանքն ստուգ-  
 ման յենթարկվի, գործողության լրիվ ընթացքում  
 հաշվառման յենթարկվի այն բոլորը, ինչ վոր լավ  
 ե. Թուշ տեղերը, սխալները գտնվեն և հենց  
 այդտեղ, փորձից հետո ուղղվեն: Գլխավոր փորձը  
 փորձնական ներկայացում ե, կատարած աշխա-  
 տանքի ստուգողական ներկայացում: Յեթե այդ  
 փորձից հետո ուղղումներ շատ լինեն, փորձը  
 պետք ե կրկնել: Ներկայացումը պետք ե անցնի  
 պարզ, կազմակերպված, առանց իրարանցման,  
 առանց շփոթության, առանց հապաղումների,  
 առանց ձգձգվածության, և չարժե այդ նպատա-  
 կով ելի 2—3 ժամ խնայել՝ գլխավոր փորձը  
 կրկնելու համար:

### ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ


Բեմադրություն և ներկայացումներն անց-  
 կացնելու ամբողջ դեկավարությունը իր վրա  
 պետք ե վերցնի կոլֆարը: Բայց նա չպիտի մո-  
 ռանա, վոր ինքը լրագրի ոեժիսորը չե, վոր

կարող ե լրագրին իր ուզած ձեր տալ: Նա ամ-  
 բողջ գործը կազմակերպողն ե միայն: Նա պետք  
 ե ամեն կերպ աշխատի յերեխաներին հնարավո-  
 րություն տալ՝ լրագրի մեջ դնել իրենց ստեղ-  
 ծագործությունը, հսարագիտությունը: Դրա հա-  
 մար կոլֆարը պետք ե ականջ դնի յերեխաներին,  
 ոգտագործի նրանց առաջարկները, նկատողու-  
 թյունները, ուղղումները և այն, միայն այն  
 դեպքում մերժելով, յեթե դրանք ակնհայտ  
 կերպով չեն ոգնում գործին:

Բ. ՅՈՒՐԳԵՎ

## ԼԵՆԻՆ

(Խմբական արտասանություն)



Մասնակցում և ամբողջ կոլեկտիվը:

Բեմի մեջտեղը՝ մավզուեյ. (Կարելի յե սարքել վորևե բարձրություն). վերև՝ լենինի արձանը՝ գեղեցիկ զարդարված ու լուսավորված:

Արձանի առաջ կանգնած են—դրոշակակիրը՝ դրոշակով, թմբկահարը՝ թմբուկով և շեփորահարը՝ շեփուկով:

Սկսում ե շեփորահարը. Փչում ե շեփորը, իբրև հավաքվելու ազգանշան. Ամբողջ կոլեկտիվը ներս և վազում ե տեղավորվում ե բարձրության մոտ, յուրաքանչյուրը նախորոք վորոշված տեղը:

Շեփորը լուսում ե: Դաշնամուրը նվազում և ինչպէս փոթորկահույզ, ուժգին յեղանակ, վորը հետո միանգամից կտրվում ե և փոխվում ե մահվան քայլերգի:

Բոլորը.—(Յերգում են լենինյան մահվան քայլերգը):



(Նվազում են «մահվան քայլերգի» վերջին տակտը: Պատանիները կանգնած են անշարժ: Դլուխ-ները կախ):

Բոլորը.—(Կամացուկ, բայց վորոշակի)  
Վնչ: (Դլուխները բարձր):

(Ուժեղ) Վնչ:  
ԶԵՆՔ հավատում:  
ԶԵՆՔ:

Լենինը կենդանի յեւ:

Զայն.—Կարոփի մեր կրծքում հավիտան...

Բոլորը.—...կրակե սիրալ Լենինի:

(Աշխուժ յերաժշտության միջանի տակտեր):

Զայն.—Դա շարժի յեռացող թարթառը չեր,  
վոր ձաղկեց աշխարհը մրրիկով ան-  
սանձ:  
Դա լուրն եր այն մասին...

Բոլորը.—(Հնկճված) ... վոր մեռավ Լենինը:

Զայն.—Այն մասին, վոր...

Բոլորը.—Լենինը (պատզա) չկա:

Զայն.—(Ուժեղ) Արև:

Բոլորը.—Կաց:

Զայն.—(Հանդարտ) Ե՞ս, արև:  
Արա դու դժուժուն:  
Հերիք ե շողքդ ձյուներում հնչի:  
Միթէ չդիտես, վոր կանգ ե առել...

Բոլորը.—(Կողմ) ... կրակե սիրալ Իլիչի:

Զայն.—Յերկիր, զավոդ:  
Հաստոց դու իմ անգուլ:  
Ազգեպանն ել չի գա ծաղկուն այգին:

Բոլորը.—Լսիր, յերկիր:

Զայն.—Բանվորական տիտանը...

Բոլորը.—...հեռացել ե մեր հաղթ շարքից:

(Սկզբում յերաժշտակումը նվազում ե միջանի մեղմ ակկորդներ, հետո փոխվում ե փոթորկալի մեղեղու յեվ վերջանում ե հանդարտ ու ցածրակարողներով, վորի ընթացքում խումբն արտասանում ե)

Բոլորը.—(Յածը, պարզ) Լենին:

Միրելի:

Մեր հայրը դու:

Ուսուցիչ:

(Դաշնամուրը շարունակում ե ցածր նվազել:  
Հանկարծ մի ուժեղ ակկորդ, յերկորդը, յերրորդը յեվ...)

Բոլորը.—Վոչ դողմա:

Վոչ տիրիր:

Վոչ թմրիր:

Զայն.—(Պինդ) Սեղմկիր, դու ձեռք, գեկին:

Զայն.—Լենին:

Բ ո լ ո ր ը . - (Շատ քարծը) Հասկանում ենք մար-  
տական հրահանդը քո,  
Լենին:

(Խիզախ, կորուկ, քուն թմբկահարություն: Շե-  
փորն ոգնում ե համավատասխան ոիթմ տալով):

Բ ո լ ո ր ը . - (Չորս տակտից հետո)  
Աշխատանք, շեփորիր:  
Աշխատանք, շեփորիր,  
Աշխատանք, շեփորը հնչիր...  
Զարկ, թմբռւկ:  
Զարկ, թմբռւկ:  
Զարկ, թմբռւկ, մարտակոչ...  
(Թմբուկի չորս տակտ):

Զ ա յ ն . - Սգի քաղերգով կյանքը թնդում ե:  
Զ ա յ ն . - Մի սպացեք:  
Բ ո լ ո ր ը . - Մեզ հետ ե լենինը ելի:  
Զ ա յ ն . - Պիոներիա:  
Բ ո լ ո ր ը . - Ամրացիր:  
Հնչեցնենք մարշը նոր սերունդների:  
(Սորից չորս աշխուժ տակտ՝ թմբուկով):

Զ ա յ ն . - Բարձր հնչեցնենք հաղթական կանչը:  
Հին կյանքը քամուն կտանք մենք:  
Բ ո լ ո ր ը . - Բանվորների մեջ  
կենդանի յե իրիչը:

Զ ա յ ն . - Բանվորների կամքին ..  
Բ ո լ ո ր ը . - ... չկա սահման:  
(Թմբուկի յեվ շեփորի չորս տակտ):

Բ ո լ ո ր ը . - Պիոներներ:  
Շարք-շարք կանգնեցնք:  
Այս մենք ենք, նոր կյանքը կառուցող:  
Զ ա յ ն . - Լենինի հետ...  
Բ ո լ ո ր ը . - ... դեպի Համ-Կոմ-Կուս:  
Զ ա յ ն . - Լենինի հետ...  
Բ ո լ ո ր ը . - ... դեպի կոմմունիզմ:  
(Չորս խիզախ տակտ):

Բ ո լ ո ր ը . - Աշխատանք, շեփորիր:  
Աշխատանք, շեփորիր:  
Աշխատանք, շեփորը հնչիր...  
Զարկ, թմբռւկ:  
Զարկ, թմբռւկ:  
Զարկ, թմբռւկ, մարտակոչ...

Վ. Ա. Ր. Գ. ՈՒ Ե Ր

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

(Կենդանի լրագիր)

Բեմը—վորեւ հրապարակ, Մասնակցում ե ամբողջ ողակը:

Ողակը դուրս ե գալիս բեմ, Առջեկց գնում ե շեփորահարը, նրա յետեկց մյուսները գալիս են շեփորի նվազի տակ:

Կոլվարը.—(Կողքից. քայլերի ոիթմով)

Վոտ վոտի,

ուս ուսի:

Ընկերներ, մեր բանակի մասին  
հաշիվ տանք:

Ողակ, կանգ առ:

Բոլորը.—Հաշիվ:

Զայներ.—Բանակի մասին,  
և ամառալին աշխատանքի:

Իրագործված

ու դեռ չիրագործված ինդիրների:

Մեր հաջողությունների...

Բոլորը.—...և անհաջողությունների մասին:

Զայներ.—Զենք ծածկի վոչինչ,  
չենք թագցնի և վոչ մի բան:

Բոլորը.—Մենք բեմում չենք,  
հաշիվ ենք տալիս:

(Խավար: Պիոներները պառկում են հատակին:  
Լույս):

Զայն.—Առավիտ:

Կոլվար.—Հենց վոր արել յելնում ե բլրի վրա,  
շեփորը պիոներական՝ այդն ե շեփորում:

(Շեփորահարն արթնացնելու յեղանակ ե նվազում:  
Առաջին հնչյունների հետ շատերը վեր են թռչում,  
յերեսսրբիչ սապոն, ատամի փոշի յեն վերցնում,  
վազում են լվացվելու կան քնածներ, նրանք շրու  
վազում են գալիս յեվ խոմփում: Միքանիսը լվաց-  
վել-վերադարձել են յեվ սկսում են անհանգըս-  
տացնել քնածներին):

Կոլվար.—Դրոշակ բարձրացնելու շեփոր:

(Շեփորահարը հավաքվելու յեղանակ ե նվազում:  
Քնածները, քնաթաթախ, վազում են լվացվելու):

Կոլվար.—Դրոշակը բարձրացնելու համար՝  
շարքի:

Ուղղվիր:

Քնածները.—(Վազելով) Կարելի՞ յե կանգնել:  
Կոլվար.—Զախ թևում:

Ուղղվիր, պատրաստ:  
Դրոշակը...

Պիռներ.—(Դրոշակի մոտից) Պատրաստ ե:  
Կոլվար.—Դրոշակը բարձրացնել:

(Պատվի յեն առնում: Շեփորը նվազում ե դրոշակը բարձրացնելու յեղանակը):

Կոլվար.—Կանգնել հանդարտ:  
Այսորվա ծրագիրը.  
«Մոտոր» ողակը՝ խոհանոցի հերթապահ.

«Ավիատորը» դեպի գյուղ, կարմիր-բանակալինների ընտանիքներին ողնելու.

«Շինարարները»՝ խրճիթ-լնթերցարան սարքելու համար.

«Շախտալինները»՝ դեպի գործկոմ, գյուղի մասին յեղած նյութերն ուսումնասիրելու:

Պարզ ե բոլորիդ:

Զախներ.—Բոլորիս:

Կոլվար.—Թելելու համար քայլերով առաջ:  
(Բոլորը գնում են):

Կոլվար.—Զեղ ցուց տալ մեր աշխատանքը,  
հավատացեք, շատ ե դժվար.  
բայց ցուց տալը շատ հաճելի յե,  
թող տեսնեն բոլորն ել հիմա:  
Ել, ավիատորներ,  
ուրախ ընկերներ,  
ինչ վոր արել եք,  
հաշիվ տվեք.  
մեկ, յերկու, յերեք:

Ավիատորներ.—(Զեռքերը յերկու կողմերը պարզած, թեզերի նման, բառերի յեկ յերաժշտության ոիթմի տակ)  
«Ավիատոր» ողակնենք,  
պատանիներ քաջ,  
մենք ուր կթոչենք  
շարքերով ուրախ:

(Շարվում են յերեք-յերեք, վարժության համար պարզած թեզերով):

Ավիատորներ.—Աշխատել ենք մենք դաշտում.  
վնրքան սիրուն տեսարան.  
քաղ ենք արել, վար ենք արել,  
սովորել ենք հունձ անել:

(«Հունձ անել» խոսքի վրա բոլորը կանգնում են ազատ: Յերաժշտակումքը մեղմ ակկորդ ե տալիս, հետո նվազում ե մեղմ յեղանակ,  $\frac{3}{4}$  տակտով):

## ԹԱՐՁ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ՄԱՆԳԱՆՆԵՐՈՎ

(Բոլորը կունում են, վերցնում մանգաղները,  
(կարելի յէ փայտից կամ կարտոնից պատրաս-  
տել) յեվ շարժումներ են գործում):

- 1 հերթի.—Իրանը թեքվում ե աջ, ձեռքերը  
մեկնում են առաջ, ձախը բռնում ե,  
աջը՝ քաղում։
- 2 » Հասկերը ուղիղ առաջները բռնել ու  
քաղել։
- 3 » Զախ կողմից բռնել ու քաղել։
- 1 » Զախ վոտքը մի քայլ առաջ, քաղել  
աջ կողմից։
- 2 » Քաղել առջևից (զիրքը չփոխելով):
- 3 » Քաղել ձախ կողմը։
- 1 » Զախ վոտքով չոքել, աջը մի քայլ  
առաջ, քաղել աջ կողմից։
- 2 » Առջևից քաղել։
- 3 » Զախից քաղել։
- 1 » Քաղիած հասկերը զիրկն առնել։
- 2 » Կանգնել խուզձերով։
- 3 » Դառնալ դեպի ձախ և խրձերը գե-  
տին դնել։
- 1, 2 և 3 » Սըրելուց հետո, մանգաղը ուսին դնել։
- 1 » Զենքերը՝ ծոծրակներին։
- 2 » Լարված կունալ։
- 3 » Մկրնական դրության մեջ։  
(Կաշելի յե միքանի անգամ անել):

Մ ե կ ը .— Արտը հնձված ե:  
Բ ո լ ո ր ը .— Դասը պատրաստ։  
Մ ե կ ը .— Մի նոր անելիք ևս ..  
Բ ո լ ո ր ը .— Կարմիր-բանակայինների կանանց հա-  
մար  
փայտ կոտորել։

(Ակկորդ: Յեղաժշոախումբը նվազում ե  $\frac{4}{4}$  տակ-  
տով: Շարժումները ներկայացնում են փայտ ջար-  
դելը: Ամեն ինչ հանդարտ ե կատարվում):

- 1 հերթի.—Աջ վոտքը յետ, ձեռքերով իբր թե  
բռնել են կացինը և յետ են տանում։
- 2 » Բերում են զլիսի վերել։
- 3 » Խփում են ուսի մոտից, վոտքը նույն  
տեղում։
- 4 » Կացինը դուրս են քաշում։
- 1 » Զախ վոտքը յետ, կացինը տանում  
են զեպի ձախ կողմը։
- 2 » Վերև։
- 3 » Հարված ուսի մոտից։
- 4 » Դուրս են քաշում։  
(Կըկնել):
- 1 » Տանում են աջ կողմից։
- 2 » Տանում են վեր։
- 3 » Չոքում են աջ ծունկի վրա, հարված։

4 հերթի. — Դուրս են քաշում:

1, 2, 3, 4 հերթի. — Նույնը, ձախ վոտքի վրա:

(Կըկնել)

Մեկը. — Առանց առարկելու  
ջարդեցինք:

Բոլորը. — Մեկ ու կես սաժեն...

Մեկը. — Աշխատեցինք:

Մյուսը. — Քրտնեցինք:

Բոլորը. — Ուտել ենք ուղում:

Մեկը. — Ավիատորներ, յետ:

Բոլորը. — Թռչենք դեպի տուն:

(Զեղերը յերկու կողմ բացած «թռչում» են,  
իսկ ողջի տակ),

Ավիատոր ողակն ենք,  
պատանիներ քաջ,  
ուր ասես՝ կթռչենք,  
շարքերով ուրախ:

(Թռչում են):

Կովարը. — Լավ եթե վատ ե,  
յեկեք չփառենք,  
լավ ե՝ «Շինարար»  
ողակին կանչենք:

Շինարարները. — (Կարգով դուրս են գալիս,  
յերգելով)

Տերտերի ննջարանում  
իրմիթ-ընթերցարան:

Ընթերցարանում՝ կեղտի

ամբողջ մի կույտ կար:

Հստ սովորության,

կապի գործի համար,

մաքրեցինք խոճիթը,

աղբը դուրս տարանք:

Հետո պլակատներ

կպցրինք պատին

զեկավարների

պատկերների հետ:

Անկյունում՝ պատգամներ,

պատի լրագիր,

ու անտեսական

այևայլ գրքեր:

Գյուղացիք ուրախ են,

մեզ ել եղ ե պետք.

մեր աշխատանքը

չի կորել իզուր:

Խրճիթ-ընթերցարանը՝

տերտերի ննջարանում՝

լիքն ե, միշտ լիքը

ամեն իրիկուն:

(Դուրս են զնում):

Կուվարը. — Ահա վերջացավ հաշվետվությունը,  
այլևս վոչինչ չունենք ասելու.  
ընկերներ, շարքի կանգնեցեք շուտով:  
Բուլորը. Պատրաստ ենք:  
Կուվարը. — Դեպի տուն,  
առուցդ քայլերով ու յերգերով:

(Նախորոք հազնված լինելով, կոլլեկտիվը թշմ-  
բուկով յեվ յերգով դուրս ե զալիս դահլիճից):

## ՅՈԿՏԵՄԲԵՐԻ ՈՒՂԻՆ

Բեմի վրա — բարձրություն, Նրա վրա ճաշակով  
ու սիրուն տեղավորվել ե կոլլեկտիվը: Յերեսում են  
միայն սիլուետներ — մարդկանց ստվերանկարներ:  
Դաշնամուրի կամ փողային նվագախմբի ձայնակցու-  
թյամբ՝

Մեկը. — Լոիր:  
Բուլորը. — Լոիր:  
Զայներ. — Թնդանոթի վորոտի տակ,  
գնդացիրի ճարճատյունի տակ  
պայքարի յեն գնում...  
Բուլորը. — Վաշտ վաշտի յետեից:  
Զայն. — Ամեն մի սիրտ համակված ե մի տես-  
չով...

Բուլորը. — «Կողջ իշխանությունը խորհուրդ-  
ներին»:  
Զայներ. — Գեներալներին  
հանգիստ չկա.  
զինվորները խռովություն են անում,

զի՞նվորները ապստամբում են:  
 Բանվորները  
 և գյուղացիները...

Բոլորը.—...ազդանշանի յեն սպասում:  
 Զայն.—Սմովնին կովի ազդանշան և տալիս:  
 Պատրաստ եք գնալու թշնամու վրա:  
 Բոլորը.—Պատրաստ ենք:  
 Ուռա...

Զայն եր.—Զարդենք շղթաները,  
 խավարը ցրենք,  
 հաղթանակը մերը կլինի:

Բոլորը.—Լենինը ասաց:  
 Պատրաստ,  
 պատախանեց «Ավորա» նավից  
 զիւ համազարկ:

Զայն.—Դողաց Զմեռալին պալատի...

Բոլորը.—...կուրծքը հանկարծ:  
 Զայն.—Խոնավ ողը...

Բոլորը.—...ձեղքում եր ազդանշանը:  
 Զայն.—Հեյ, ով վոր բարեկամ ե...

Բոլորը.—...կոշտացած ձեռքերի,  
 հրացանը ձեռքին՝ շնոր դեպի պատ-  
 նեց:

Զայն.—Թշնամու վոհմակը...

Բոլորը.—...վերահաս մըրիկից յեղավ ցիրուցան:  
 Զայն.—Հաղթանակի կանչեր...

Բոլորը.—...ոլոցան դեպի վեր,  
 Սուրաց դեպ առաջ  
 զնացքն-Հոկտեմբեր:  
 Հրթիոններն ահա յերկինք են թըռ-  
 չում—  
 Փըշշ... (Նոթիո—«ուսկետ» են բաց  
 թողնում):  
 Կեցցե խորհուրդների իշխանությունը:  
 Ուռա...

(Բոլորովին լույս Բոլորը ներկայացնում են  
 շարժվող զնացք—վրֆ-փուֆ... նշյունների յիշ  
 ֆշոցների միջից՝ արտասանություն):

Զայն եր.—Տարի առ տարի,  
 քայլ առ քայլ...

Բոլորը.—...հարված առ հարված,  
 քար՝ քարի վրա...

Զայն եր.—...շինեցինք հաղթ  
 ու ճիգ թափեցինք  
 կարմիր զբոշի տակ.  
 մենք հավատում ենինք  
 մեր դեկավարին...

Բոլորը.—...իլիչին:

Բոլորը.—Մենք ազատվեցինք,  
 սլաղանք դեպի լույս:  
 Թուչում և ահա

մեր արտպասուր

զնացըն-Հոկտեմբեր:

Պինգ բռնեցեք

պողպատ խորհուրդները,

այնքան ել ուժեղ չես

թշնամու ճանկերը:

(Բոլորը կտիւ են զցում զլուխները, խոնարշվում  
են: Հուսարծակ լինելու ղեպում՝ կարմիր ճա-  
ռազայթներով լուսափորել դրոշակը):

Զայն.—Լենինը չդիմացավ,

(ցածր) հեռացավ շարքերից...

Բոլորը.—Վո՞չ:

Չենք ուզում լսել մենք սպի ձայ-

ներ:

Զայն.—Կոմմունալի շենքը...

Բոլորը.—...կավարտենք, կավարտենք:

Զայն.—Մեր սրտերում...

Բոլորը.—...Լենինն ե ապրում:

(Բոլորովին լուս: Լենինի պատկերը: Բարձր  
թմբկահարություն):

Զայն.—Կանչերը հերիք են:

Բոլորը.—Սովորել, սովորել:

Զայն եր.—Կանչերով դիտություն ձեռք չես  
բերի:

պետք ե ամեն մի տառի վրա տքնել,  
զբոհով նվաճել ամեն մի խոսք:

Բոլորը կսովորենք,

ուժ կհավաքենք:

Տարի առ տարի

մեր հայերի

փորձն ուժեղացնենք:

Յեվ ինչքան ել վոր

մահը ծերերին գերանդով հնձի,...

Զայն.—...փոխարինողներն են գալիս:

Բոլորը.—Գալիս են:

Յերկրի բոլոր ծայրերից:

(Աջ ձեռքը վերեվ, իրբեվ նշան՝ «փոխարինողների  
փոխարինողներն են գալիս»):

Ուրախ դպրուա դու, թմբնեկ,

լսեք քայլերկը, պիոներներ վողջ.

թող Հոկտեմբերը հրաբորք լեռա,  
մենք աճում ենք, աճում Հոկտեմ-  
բերի հետ:

Արծվիկներից ել խիզախ կլինենք,  
ամեն կոլեկտիվ՝ ինչպես զրանիտ:

Լսեցեք մեր կանչը, թե ջահել, թե  
ծեր,—

Մենք կծավալվենք ամբողջ աշխար-  
հում:

(Լավ կլինի՝ թղթե գունդ պատրաստել յեվ գո-  
տեվորել կարմիր կտորով):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

## 8 ՄԱՐՏԻ

(Վաղջույնի խոսք մայթ-բանվորուհիներին)

Արագ քայլերգով դուքս և գալիս ողակը, շարքի  
յե կանգնում հանդիսականների առաջ:

Բուրը.—Մենք այսոր թողինք մեր դաստ-  
լանը:

Զայներ.—Թե դաս,  
թե զիրք,  
թե նստարան:

Բուրը.—Վորպեսզի սրտագին վողջունենք ձեզ  
մարտի 8-ի՝ բանվորուհու որբու:

Զայն. —Մարտ-բանվորուհիներ, ...

Բուրը.—...լսեցեք մեզ:

Զայն. —Մեր փոքրիկ սրտերում  
և կրծքերի տակ...

Բուրը.—...նույնպես կայծեր են վառվում:

Զայներ.—Չեն դասնա անցյալի սկ յերազները,  
յերբեք լետ չեն գա մոռալ որերը:

Բուրը.—Այս մասաղ գարնան առաջին որվան  
և պիսներներիս հավատացեք դուք:

## ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ

(Վաղջույն մայիսի մեկին)

(Ձեռք-ձեռքի բռնած՝ պիսներները վազում են  
բեմ յերգելով):

Յերկնբում, արե, հրդեհով վառվիր.  
գալնան ծիծեռնակը յերկնբով փըռ-

վիր:  
Դու, յերկիր, այսոր ծաղկիր, զար-

դարվիր,  
Մայիսի Մեկին՝ յել, դիմավորիր:

Քամի, սլացիր դեպի քաղաքներ,  
պիսներական մեր վողջնայնը տար,

բերկրանքն ե վառում մեր մատաղ  
կրծքեր,

բանվորին տալիս մի ուժ անսպառ:  
Եօ, դուք, ընկերներ, կանգնեցեք

շարքի.  
գնանք դիմավորենք Մայիսի Մեկին:

Թող թռչեն, ամբողջ յերկրով սլանան  
մեր վողջունները պիոներական։

(Աղտասանուած են)։

Զայներ .—Յեվ ամեն մի մայիսի մեկ  
մեզ կոփում ե, ամրապնդում։  
Բոլորը .—Ուժգին հնչում յերկրե յերկիր,  
բանվորական կապն հաստատում։  
Զայներ .—Յերբեմն այստեղ, մայիսի մեկին,  
ժանդարմաներ կային մտրակներով.  
միթե մոռանմաք սպանվածներին՝  
ընկած թշնամու գնդակներով։

Բոլորը .—Վճչ։

Զայներ .—Քանի շունչ կա մեր կրծքներում,  
այդ բոլորը չենք մոռանա։

Բոլորը .—Չենք մոռանա։

Զայն .—Մենք կոսկորենք,  
մենք կպայքարենք։

Բոլորը .—Ու կպատրաստենք մարտիկներ  
մեզնից։

Զայներ .—Լենինի դրոշով  
Մայիսի Մեկին

դուրս կգան փողոց...

Բոլորը .—...միլիոն ընկերներ։

(Թմբուկ: Բուրգ: Յերգում են):

Յերկնքում, արև, հրդեհով վառվիր.  
(և այն):

(Թմբուկ խիելով դուրս են զալիս):

## ՍՈՎՈՐԻՇ

ԿԵՆԴԱՆԻ ԼՐԱԳԻՐ

ԳՈԾՈՂ ԱՆՁԻՆՔԻ

ՍՈՒՐԵՆ—կովարար պիոներ։

ԽՈՐԵՆ—պիոներ, վոր չի ուղում սովորել։

ԽՍԵՎԱԾՆ ՊԻՌՆԵՐ

Յերեխաներ, պիոներներ և ուրիշներ։

(Կենդանի լրագիրը (ողակը) մտնում ե քայլերով):

Բոլորը .—Մենք այսոր լրագիր ենք տալիս,  
վոչ թե լրագիր, այլ պողպատե ոռումք։  
այս ոռումքը բեմի վրայից  
(այս-ինչ) կուլեկտիկն ե թողնում։

Մեկը .—Ընկեր, ուշագիր նայիր,  
մի նայիր դու պատին,

յերբ կհաշվեմ մեկ, յերկու յերեք...

Բոլորը .—...ցուց կտանք «Պիոներ» լրագիրը։

Մեկը .— Ժամանակն արագ թող սլանա,  
յետեից խավար թողնելով...

Բոլորը .— Մեր նպատակն ե... .

Մեկը .— ...սովորել:

Բոլորը .— Սովորել ապրել...

Մեկը .— ...հասնել գոնե մի բանի:  
Մեր հերթական համարը...

Բոլորը .— ...և լուրջ ե, և ծիծաղելի:

Մեկը .— Անզրագետ պիոներների մասին,  
և անմոռաց թամբակների,...

Բոլորը .— ...վորոնց զպրոցը բանտ և թվում,  
լոկ դասն ու գիտությունը՝ լուծ:

Մեկը .— Սկսեցինք:

Յերկը ոթեր .— Լսեցիք:

Բոլորը .— Նայեցիք:

Մեկը .— Մեկ,  
յերկու...

Բոլորը .— ...յերեք:

(Ուժեղ նվազի տակ՝ դուրս են վազում: Խորենն  
ու Սուրենը զալիս են զանազան կողմերից, վոր-  
ներին «չմուշկներ»՝ կանյուկ, «չալիկ»):

Սուրեն .— Խորեն,

Խորեն .— Սուրեն:

Սուրեն .— Ինչու զպրոց չես զնացել:

Խորեն .— Յես: Հենց այնպես:  
Ինձ թվում ե, վոր կարդամ

կամ չկարդամ, այդ միենումն ե,  
չմուշկներով հու սրանից  
լավ չեմ սըլլա:  
Ինչի՞ն ե պետք դատարկ թվաբա-  
նություն:

Ա՛յ ինչ եմ ասել —քանզրբազություն:

(Յետ ե շըլվում ու զետին փովում):

Սուրեն .— Յես ել համաձայն եմ:

Թեև իմ հայրը այս բանի համար  
ուելիս ե տալիս,  
միենումն ե, կարդամ  
կամ թե չկարդամ,  
կինովի տոմար չի թանգանալու:  
Ուսում ասածդ տուր՝ ում ուզում ես,  
բայց ինձ —վնչ յերբեք:  
Ա՛յ ինչ եմ ասում —աղավախ թոցներ  
գոնապանին չարացնել,  
կամ սրանըրա քիթ ու պառնպը  
ջարդուփուրդ անել:

Խորեն .— Յես համաձայն եմ, իհարկե,  
լավ ե խաղ անել վորեկ դաշտում,  
քան թե հյուծվել դասարանում:

Սուրեն .— Իսկ դու լավ նշան խփել գիտե՞ս:

Խորեն .— Հավանական ե, քեզնից վոչ պակաս:

Սուրեն. — Նշան խփողիս մաիկ արեք: Բաս չե՞:  
 Դե արի՝ փորձենք.  
 Խփիր դե տեսնենք՝ դեմի լապտերին:  
 Խորեն. — Զե՞ վոր կջարդվի:  
 Սուրեն. — Կջարդվի...  
 հազըր չե կպչի:  
 Խորեն. — Լավ, դե դես: (*Մեկ, յերկու անգամ*  
     նետում ե, չի կպչում):  
 Սուրեն. — Ը՞հ, ճանձ բռնող դմբո,  
     լավ խփեցիր, բաս չե՞:  
     Հապա մեկ յես տամ: (*Խփում ե ուկ*  
     կոտըռում):  
 Խորեն. — Այդ ի՞նչ եր՝ արիր:  
 Սուրեն. — Մի տես, վախեցավ:  
 Պիոներ. — (*Մերս մտնելով*) Այդ ի՞նչ խուլիդա-  
     նություն եք անում:  
     Իսկ դու ի՞նչու դասի չես գնացել:  
 Սուրեն. — Դու ի՞նքդ գնա, թե մի ոգուտ կա:  
 Պիոներ. — Ամոթ ե այդպես վերաբերվել դասին.  
     գուք պիտիների անունն եք գցում:  
 Սուրեն. — Պահ, շատ ես քեզ յերևակացում,  
     ի՞նչ ե՝ մեր պիսին փիլիսոփա դար-  
     ձար:  
 Պիոներ. — Լավ, կտեսնենք՝ ով ե ճշմարիտ:  
     (Դնում ե):  
 Խորեն. — Գործը վչացավ...

Խորեն. — Յանիկ կաց, արի մեր յերկը զլենք:  
     (Յերգում են) Խորենի հետ միասին  
     մենք յերգում ենք ձեզ համար:  
 (*Կրկնակ*) *{* Լավ ե ման գալ միշտ ազատ,  
     քան դպրոցում հա փտել:  
     Թող աղերքը նստոտեն,  
     գիրք ու տետրակ հոտոտեն:  
     (Կրկնակ):  
     Դպրոցն ու դասն անիծած,  
     ներկայացում արի տանք:  
     (Կրկնակ):  
 Խորեն. — Դե, Սուրեն, հապա դեմքդ մեկ փոխիր,  
     վոր տեսնողը փորը բռնի ծիծաղից:  
 Սուրեն. — (*Չմուշկները հազնելով*)  
     Ի՞նչ կա, գուց տամ, ի՞նչպես յերկու  
     անգամ յերկու,  
     թե իմ գլուխս ի՞նչի յե ընդունակ:  
     Նայիր (*ի՞նչ վոր ըան ե ծեվացնում*  
     ու գլուխում ե զետին):  
 Խորեն. — Համար, համար, պիսկացիր,  
     ճակատդ վոնդ ե,  
     մեր աղատ:  
 Սուրեն. — Ի՞նչ ես հոհոսում, տո՞ դդում,  
     տատամներդ կփշեմ:

Խորեն.—Քաջ Նազարիս մի տեսէք,  
չպառկեցնեմ յերկարումեկ:

(Երար ոծիք են ըռնում: Կոխվ, ծեծ: Կենդանի  
լրազրին մասնակցողները ներս են թափվում,  
կիսաշըշան են կազմում: Խմբական արտասանու-  
թյուն՝ յերաժշտության նվազի տակ):

Բոլորը.—Նայեցէք սրանց, պիոներներ,  
վրաց են ջարդում կող ու քիթ:

Մեկը.—Յեկեք՝ մի լավ զվարձանանք,  
իսկի ցիրկումն ել չենք տեսնի:

Յերկրորդը.—Ասում են պիոները...

Բոլորը.—...որինակելի պիտի լինի:

Մեկը.—Իսկ այս յերկուոր, որինակ,...

Բոլորը.—...նման չեն պիոների:

Մեկը.—Դուք կարծում եք՝ ուսումը հիմար  
բան ե:

Յերկրորդը.—Ուսում ունեցողը վոչ կսովի,  
վոչ կմրսի:

Բոլորը.—Վո՞չ:

Մեկը.—Մենք պետք ե հավասարվենք...

Բոլորը.—...իլիչի ասածի պես:

Մեկը.—Անգրագիտությունը վերացնենք:  
Պիոներն առանց գիտության...

Բոլորը.—...միևնույն ե՝ թե փայտ:

Մեկը.—Պիոներն առանց կրթության...

Բոլորը.—...միևնույն ե՝ թե գերան:

Մեկը.—Պետք ե հարցուրից...

Բոլորը.—...հարցուրը զրագետ լինի:

(Յոյց են տալիս 100-ը մեծ թվանշաններով  
զրված):

Մեկը.—Պիոներներ, այդ մասին մտածեցէք:

Բոլորը.—(Յերգում են)

Եօ պիոներներ, դեպի դպրոց,  
գեռ յեսանդ կա ձեր մեջ վառ,  
զիտությամբ ցըենք մութ ու խավար,  
իլիչի պատգամ պահենք անմոռաց,  
պիոներ, հասել ե ժամը.  
սովորել, սովորել պետք ե հիմա:

Խորեն.—(Յերգում ե)

Յես լսեցի՝ ինչ վոր ասացիք,  
այդ ձիշտ վոր պատգամն ե իլիչի.  
ինձ առաջ թվում եր՝ ուսումը դա-  
տարկ

բայց խելքի յեն յեկել հիմի:  
(Կըկնակ):

Սովորել եմ ուզում նորից դպրոցում,  
պետքական լինել կանքի համար:  
չլինել այս աղմկող, չար,  
ու կորցրածը վերականգնել:

(Գնում ե դեպի յերեխաները):

Մեկը - Այլ կեցցես, վաղուց եր պետք  
քնածի աչքելը բաց անել։  
(Սոթիկին) Իսկ դու ինչ ես մտա-  
ծում։

Սուբեն. — Դատարկություն է խոսքերը ձեր:  
(Յերգում ե) Շատ միք խոսի դուք  
այդպես,  
իզուր, աննպատակ,  
ամեն մարդ ել կունենա  
մի ուրիշ ճաշակ:  
Դուք սիրում եք սովորել  
ինչ-վոր զրբերով,  
յես սիրում եմ զորվել  
իմ չմուշկներով:  
Մաթեմատիկան անպետք,  
միան չոր թվեր,  
իսկ յես սիրում եմ անել  
զանազան ձևեր:  
(Հմուշկները վոտքերին՝ զանազան շարժուսներ  
ե անում):

Մ Ե Կ Ը .—Հավանական ե, վոր հայրը  
դազգյան չի տեսել,  
իսկույն յերևում Ե՝  
ուժից ե ծնվել:

Ելուսը՝ Նրա բանն ե խաղալ, ազատ զբոս  
նել,  
բայց մեր դպրոցը՝ յերթեք վոտք  
դնել:

Յերբորդը. — Զմուշկներն սպատկար են, ...  
Բոլորը. — ...իհարկե, կասկած չկա:  
Մեկը. — Բայց ով խաղում ե ամբողջ որը...  
Յերկրորդը. — ...և չի սովորում, նա...  
Բոլորը. — .. թամամ հիմար ե:  
Մեկը. — Պետք ե սովորել:  
Բոլորը. — Գիտությունն ուժ ե:  
Մեկը. — Յեթե մեկը համառում ե յեզի պես, ...  
Յերկրորդը. — ...նա հարկագոր չե մեզ.  
նրան դուրս կցցենք կողեկտիվից,  
ինչպես...  
Բոլորը. — ...ֆուտբոլ: (Յուց են տալիս):  
Մեկը. — Կզնաս, կզգաս, վոր պետք ե սովորել:  
Բոլորը. — Կհիշես մեզ ու մեր կողեկտիվն ել:  
Մեկը. — Կզջաս, կզաս մի որ անպայման:  
Յերկրորդը. — Ժամանակն արագ թող պահ,  
իր յետեից խավար թողնելով:  
Բոլորը. — Մեր նպատակն ե...  
Մեկը. — ...սովորել:  
Բոլորը. — Սովորել՝ ապրել:  
Մեկը. — Ոգտակար լինել վորեն բանով:  
Մուռը. — Փուցե Խորենի  
ու Սուրենի մեջ  
գուք տեսնում եք ձեզ:  
Բոլորը. — Գոնե այնքան զիտակցություն ու-  
նեցիր, ...

Մ Ե Լ Ը . — ... կատարիր...

Բ Ո Ւ Ր Ը . — ... լենինի պատգամը:

(Յեղզում են) Հրահանգված եր ողակ-  
ներին՝

զիտության ամրոցների վրա դրոհ  
տար,

և մենք գնում ենք բուռն ձգտումով,  
վոչփոք մեզանից յետ չպիտի մնա:

Դե, ընկերներ, մեկտեղ առաջ,  
զլուխներդ մի կախեք.

ուսում առնենք, պատրաստ  
լինենք՝

կոճսոմոլին ողնելու:

(Քայլերզով զուրս են զնում):

ՎԱՐԱԴԻՌ

## ԶՈՐՐՈՐԴ ՈՐԵՆՔԸ

ԿԵՆԴԱԿԻ ԼՐԱԳԻՐ

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Զ Ի Ւ Ք

ԽՈՐԵՆ	Անկազմակերպ	ՊԵՏԻԿ
ՍՈՒՐԵՆ	պատանիներ	ՍԵՐԻԿ
ԲԱՐԵՆ	10—15 տար.	ԱՐՃԻԿ

I ողակավար, II ողակավար

«Կենդանի լրազիր» ողակը: Պիոներներ և այլն:

Կենդանի լրազիրը կարգով կանգնում ե հանդիսական-  
ների աշխարհում:

Զ ա յ ն . — Ընկերներ, ամառն արդեն հասել ե,  
դեպի բացերը, դեպի դաշտեր.  
ամբարիր այս ամռան քեզ համար  
ուժեր՝

դաշտերում, առվակում ու լեռներում:

Արեւով քո մարմնի մորթը պնդացրու,

վոր ամբողջ տարին նու մինի դի-  
մացկուն:

Բոլորը .—Մարզիլ թե մկան և թե քո միաքը, ...  
Զայն .—...բայց չմոռանաս գործի մասին:  
Բոլորը .—Առողջությունը պնդացնել այս ամ-  
ռան —

այդ մեր խնդիրն ե հերթական:  
Զայն .—Բայց պիոներն աղնվական չե,  
վոչ ել ամառանոցավոր,  
վոր ապրի ճիշտ այնպես,  
ինչպես աղնվականի ճռւտերի պես:  
Բոլորը .—Վո՞չ:  
Զայն .—Յեթե ավելի հաջող արտահայտվենք,  
նա...  
Բոլորը .—...նա կազմակերպիչն ե  
արջապատի պատանիների:  
Զայն .—Վորպեսզի նրանք անգործ չթրենեն  
փողոցներով ու նրբանցքներով, ...  
Բոլորը .—...պետք ե բոլորին դրավել...  
Զայն .—...մեր խաղերով, ...  
Բոլորը .—...եքսկուրսիայով, զբոսանքներով:  
Զայն .—Վորպեսզի պարզ լինի բոլորիդ համար,  
ահա ձեր առջե...  
Բոլորը .—...յերկու ողակ:

Զայն .—Մեկ ողակը—չունի վոգի պիոներական,  
սիրում ե միայն ինքը իրան,  
և յերբ խաղում ե բաց հրապարակում,  
չի թողնում ուրիշներն իրենց մոտ  
գան:

Յերկրորդ ողակն եւ ուրիշ տեսակ,  
ամեն մի պատանի նրանց ընկերն ե.  
Նրանք գիտեն իրենց անելիքը —  
ուրիշներին խաղի մեջ գրավել:

Զայն .—Հերիք ե շատախոսել ..  
Բոլորը .—Նայեցնք:  
Զայն .—Տեսնք ով ինչպես ե կատարում...  
Բոլորը .—...պիոներական չորրորդ որենքը:

(Քայլերզով հեռանում են):

Պետիկ .—(Կողքից բարձրանալով)  
Սեղիկ, յէկ այստեղ:  
Սեղիկ .—(Յերեվում ե) Ահա յես յեկա,  
Պետիկ .—Կարելի յե խաղալ,  
Խորեն:

Խորեն .—(Բարձրանալով) Ի՞նչ սատանա յես  
բերնիդ մեջ պահում:

Պետիկ .—Դու խուրդի պես ինչու յես սողում:  
Բոլորը .—Սկսենք:  
Խորեն .—Յես առանց փողի յեմ խաղում, դի-  
մեք:

Սեղիկ .—Խորեն, հերիք ե խուր տեղ խսսել,  
գու հն պառակ չես,  
չե վոր ջահել ես:  
Պետիկ .—Հիմարներ, հերիք աղմկեք ալդքան,

գեռ մտածում եք ջարդել քիթ-բերմնի,  
նու, մենք սկսեցինք:

(Ակտում են վորեվե խաղ խաղալ, փողով, —որինակ՝  
թուղթ են խաղում կամ՝ «ղումար» յեվ այլն):

Խոր են. — Գողանում ես դու,  
այդ իմն ե, հիմար:

Սուրիկ. — Սուտ ես խոսում դու, կոպելլը իմն  
ե: (Համրում, խլում ե):

Խոր են. — Կաց, կաց, իմ հերթն ե:  
(Խփում ե յեվ չի տանում):

Պետիկ. — Հիմա բոլորիդ ենալես կլպեմ...  
Մեկ ու...

Խոր են. — Մեկ ու զահըումար:  
Հահահահահա...

Սեդիկ. — Մարդ խաղալ պետք ե խմանա,  
թթու թան չի, ամեն մարդու բան չի:  
(Խփում ե. խաղը շարունակվում ե):

Պիոներներ. — (1-ին ողակ) Գնդակն այստեղ  
տուր:

Խփիր,

այս այդպիս:

Ողակավարը. — Պետք ե խաղալ կազմակերպ-  
ված.  
ապա, կազմէք կլոր շրջան:

(Պիոներները շրջան են կազմում: Պատանիները  
նայում են):

Երի պիոն եր. — Յես կղեկավարեմ:  
Բոլորը. — Վոչ, յես, յես, յես...  
Ողակավարը. — Յես եմ ղեկավարում, ել մի  
վիճեք:

Գնդակը վեր, սկսեցէք:

(Դնդակը շրջանից դուրս ե ընկնում. Խորենը  
ընկնում ե):

Պիոն եր. — Խնչու յես ձեռք տալիս գնդակին,  
քոնը հո չի, անոր այստեղ:

Խոր են. — Դե թող քեզ լինի, առ:

Պետիկ. — Ի՞ն, գնդակի համար ինչ են անում:

Սեդիկ. — «Պարոններ»:

Ողակավարը. — Բնկերներ, մի բղավեք, նորից  
խաղն սկսում ենք:

(Նորից խաղում են):

Խոր են. — Բնկերներ, թողեք՝ մենք ել խաղանք,  
մենք ել խաղալու ցանկություն ու-  
նենք:

1 պիոն եր. — Պա, մեր շատ պետքն ե:

2 պիոն եր. — Այս ել քեզ նոր ցավ:

Ողակավարը. — Թող լինի այդպես.  
նու, նորից սկսենք:

(Պատանիները շրջան են կազմում: Տարածությու-  
նը յերկու քայլ: Շրջանի մեջ՝ ողակավարը):

1 պիոներ.—Սկսեցինք, բռնիր: (Դնդանիլ Խորենին եղանակում վայր եղանակում):

2 պիոներ.—ՀԱՅ տես, դեռ խաղում ել ես, խաղողիս մտիկ:

Ողակավարը.—(Խորենին) Բռնիր, սկսում ենք:

2 պիոներ.—(Գնդակը նետելով Սեղիկին) Բռնիր: (Սա վայր եղանակում) Խաղացողին մտիկ արեք:

Սեգիկ.—Պատահաբար դուքս թռավ ձեռքիցս: (Ամբողջ ժամանակ ծաղրում են պատանիներին):

1 պիոներ.—(Խորենին) Եղ ճարպիկությունը վորաեղ ես սովորել:

2 պիոներ.—Կովի պես ճարպիկ ես: (Բոլորը ծիծաղում են):

Խորեն.—Դե զբողը տանի նրանց, գնանք, ընկերներ:

Պետիկ.—Խելոքներ, վաղուց եք ձեր փալինքը սրբել...

1 պիոներ.—Ախ, վճնց, հայնուանք...

2 պիոներ.—Գուցե ուզում եք պիոներական բռունցքի ուժը փորձել:

Սեգիկ.—Ի՞նչ անենք զոր պիոներ ես, բայց զոր ախմախ ես:

Ողակավարը.—(Վրա հասնելով) Ի՞նչ: Խորեն.—Փողկապդ քանդի, քիթդ որբի, հետո վրա յեկ:

Սեգիկ և Խորեն.—(Յերգում են) Հիմար պիոներներին՝

հարցուրին մի ձեռքով կտաս: Ողակավարը.—Ա՛խ, այդպէս. լավ: Սեղմեցէք սրանց՝ մի տեսնեմ, պիոներներ:

(Աղմուկ, տուրուղմիոց, պատանիները նահանջում են քեմի խորօը: Լոռմջուն):

Բարկեն — Սուրեն, այստեղ: Սուրեն.—(Բարձրանում ե) Պետք ե կանչել Արշիկին:

Արշիկ, յեկ խաղ անենք միասին:

Արշիկ.—Յեկա: (Գալիս ե): Բարկեն.—Հրապարակը լայն ե:

Սուրեն: Ճիշտ ե: Արշիկ.—Ուրեմն սկսում ենք:

(Ակսում են խաղալ. փողը վեր են նետում ողի մեջ, յեկ յերբ ընկնում ե գետին, նայում են. յեթե տառերը գրված կողմն ե ասել իր ընկերը, յեկ նկարված կողմն ե յերեվում, կամ ընդհակառակը, դիմացինը տարվում ե: Խակ յեթե ասածը ճիշտ ե լինում, այսինքն, փողի այն յերեսն ե վերեվ լինում, վոր ասել ե, նա փողը վերցնում ե յեկ ինքն ե շարունակում խաղը):

Սուրեն.—Այ հիմանալի խաղ: Գցում եմ:

(Խաղը շարունակվում ե նույն վոգեվորությամբ: Զայներ են լավում: Ներս են վազում 2-րդ ողակի պիոներները):

Ողակավարը .— Այստեղ խաղանք:  
Սարքել՝ ինչ վոր պետք եւ:

(Արագ սարքում են):

Ողակավարը .— (Պատունիներին)  
իսկ դժւք, ընկերներ,  
դժւք ինչ եք անում:

Բարկեն .— Մենք փող ենք խաղում:

Ողակավարը .— Ուրիշ խաղ չգտանք...

Սուրեն .— Ուրիշ խաղերը հետաքրքիր չեն:

Ողակավարը .— Ուզնում եք՝ ձեզ խաղ ցուց  
տամ:

Արշիկ .— Յուց տուր աեմնենք:

Ողակավարը .— (Պիոներներին) Կանգնեցնք  
ըստ հասակի:  
Ուղղվեցք, հանդարտ:  
Ի՞նչ խաղ եք ուզում:

1 պիոներ .— Աթուրմա:

2 պիոներ .— Այերոբոլ:

Ողակավարը .— Այերոբոլ ով ե ուզում:  
Բոլորը:

«Առաջին-յերկրորդ» արեք:

(«Առաջին-յերկրորդ» են անում):

Ողակավարը .— Յերկրորդ համարները տաս  
բայց տուած:  
Մարշ:

Հրապարակ գծեցնք:  
Այգանք: Բոլորդ գիտե՞ք այս խաղը:

Սուրեն .— Մենք չգիտենք:  
Ողակավարը .— Խաղն են ե, վոր չթողնեք

գնդակը մի անգամից ավելի  
հրապարակի ձեր կեսի վրա  
գետին կաչի:

Այստեցեք ոգնել ձեր խաղները  
ներին:

Նպատակն եւ գնդակը զցել մյուս  
քաղաքը:

Թե վոտքով, թե ձեռքով —  
չի կարելի մի անգամից ավելի խփել:

Պատահն ին եր .— Հասկանալի յեւ:  
Ողակավարը .— Ուրեմն սկսում ենք:

(Պատահներն սկսում են խաղալ):

Ողակավարը .— Այգանք լավ, շատ լավ:  
Գոյն: Առաջին համարները կրցին:  
Նորից ենք սկսում:

Այ այսպես,

կեցցես:

1 պիոներ .— Դե մի հորանջի,  
Եւ:

(Բարկենը գնդակը ներս ե անում իրենց քաղաքից ներս):

2 պիոներ.—վոչինչ, կռավորիւ

Ողակավարը.—Յերկրորդ համարները կրեցին:  
Նորից ենք սկսում:

(Մտնու՛մ են առաջին յերեր պատանիները):

Պետիկ.—Նորից են խաղում:

Խորեն.—Կարծես նրանք չեն:

Սեգիկ.—Կարծես թե.

բացց բոլորն ելնուին խուժաններն են:

Ողակավարը.—Դուք ի՞նչ խաղալ եք ուզում:  
Խորեն.—Զերոնց հետ բավականին խաղացինք,  
հերիք եւ:

2 պիոներ.—Թողեք կոտրտվելը,  
յեկեք:

Սուրեն.—Խորեն:

Խորեն.—Նայեցեք, ընկերներ,  
Սուրենն ել ե այստեղ:

Պետիկ.—Մտնենք խաղի մեջ:

Ողակավարը.—Կարելի յեւ,  
մտեք:

(Նրանք մտնում են ու խաղում):

Ողակավար—Դե, հերիք ե, ընկերներ, հոգնեցիք.  
յեկեք մի բան յերգենք.

հապա կլոր նստեցեք.

ի՞նչ յերգենք:

Զայներ . «Սպիտակ բանակներ», «Կարմիր  
փողկապներ», «Յերիտասարդ գվար-  
դիա», «Կոմսոմոլիա», «Հոկտեմ-  
բերիկ»:

Ողակավարը.—Յերգենք՝ «Կարմիր փողկապ-  
ներ»:

Խորեն . Մենք խոսքերը լավ չգիտենք:

Ողակավարը .—Վոչինչ . յերգեցեք:

(Յերգում են):

Բուրեր .—Կարմիր փողկապներ, ալ պիոներներ,  
անվախ քայլեցեք առաջ ու վեր.  
մենք հոկտեմբերին զալիս ենք նվեր,  
թող ուրախ լինեն շարքերը մեր:  
Դե առաջ, պիոներներ,

պատանի շարքեր,

փողկապներ կարմիր և ուրախ,

թող ամենից վեր,

արնագույն թեր

փողեն մեր շարքերի վրա:

Մեր կրծքի վրա խարուկ ե վառ-

վում,

բոցավառում ե սրաերը մեր,

մենք կուռ շարքերով առաջ ենք  
քայլում,

ավելի, ավելի հեռուներ:

Դե առաջ, պիտներներ,

(և այն):

Յեխում ե մի բանակ ալ-վառվուն,  
ձգվում ե ավելի հեռուներ,

ամբողջ աշխարհը կարմիր ե կապում,  
աշխարհը դարձել ե պիտներ:

Դե առաջ, պիտներներ,

(և այն) \*:

(Ներս ե զալիս կենդանի լքազիրը (ողակը) յեզ  
սկսում ե արտասանել):

Բոլորը.—Ամեն կողեկտիվ,

ամեն ողակ:

Մեկը.—Ուշադրություն անապաստաններին,  
գոչ-պիտներներին:

Յերկրորդ ողակից վերցրու որինակ.  
արա այնպես դու,  
ինչպես ասված ե...

Բոլորը.—..չորրորդ որենքում:

Մեկը.՝ Կազմակերպիք...

Բոլորը.՝...պատանիներին:

Մեկը.՝ Կրթվիր ու կրթիր...

Բոլորը.՝..լենինյան վոգով:

Մեկը.՝ Վոր մեր հայրերը տեսնեն,  
թե իրենց ո՛վեր են...

Բոլորը.—..վոլուսարինում:

Մեկը.—Ընկերներ, պողպատի պես ամուր,  
տարածվեցեք ինչպես մի վարար  
գետ...

Բոլորը.—Մեր միտքն ու սիրով  
լենինի հետ:

(Վերջում կարելի յե յերզել պիտներների լենինյան  
քայլերզը):

\* Յերգը՝ Մ. Արմենի, Եր. թ.

# ԿԵՑՑԵ ԱՌՈՂՉՈՒԹՅՈՒՆԸ

(ԲԵՄԱՀՐԱՎՅՈՒՆ)

ԳՈՐԾՈՂ. ԱՆՉԻՆՔ

Բ Ա Յ Ի Լ Ն Ե Ր

1. Թարգախօք - կապույտ բալախոնով.
2. Դիմեերիք - կանաչ բալախոնով.
3. Քուրեօք - վարդագույն բալախոնով.
4. Կարմըուկը - սպիտակ պուտավոր բալախոնով.
5. Փոսին - մոխրագույն ցնցոտիներով.
6. Ցեխը - զեղնագույն ցնցոտիներով.
7. Սրեվի ճառագայթը - բաց-զեղին շորով. զլխին հլեկորական լամպա և ճառագայթիներ.
8. Ոզը - կանաչագույն ծխախոտի թղթով - միշտ շարժման մեջ.
9. Զուրբ - կապույտ-կանաչ շորով, ձգված իր շերով հատակին.
10. Ֆիզկուլտուրա - սպորտի կարմիր զույնի հագուստով: Բոլորը կրծքերին ունեն համապատասխան մակագրություն:
11. Պիոներները:

Բացի էրի խումբը (Արտասանում ե) Մենք, բացիներս, բերում ենք մեզ հետ հիվանդություններ շատ ու բազմազան. Փոշի, աղտ ու կեղտ մեզ միշտ ողբավետ, թեև ձեզ համար բանի չենք նման: Մենք շատ ենք սիրում խոնավ նկուղներ, պայծառ արել մեզ միշտ թշնամի, մեր հունձի համար լեկան լավ որեր, Ել գու, պիոներ, եղ լավ իմացի: Թոքախը. — Յես ես աշխարհում ուժեղից ուժեղ, ու իմ անունն ե թոքախտ, մեծ թոքախտ. Իմ սուր ճանկերում թե մարդ, թե մժեղ, ինձ ընկեր չկա, անհաղթ եմ, անհաղթ. բացիլս ու փոշիս աշխարհ են թոչում, անկում ու ճանկում բյուրավոր զոներ. ծերին, մանուկին գետին են շրջում, բացիլս ու փոշիս աշխարհին նվեր: Կարմը ու կը և Դիմեերիտը. — (Արտասանում են) Յերեխաներից միշտ ման անպակաս չկա փրկություն մեր բացիներից.

յերկու ընկերով մի-մի պատռհաս»  
վրեժ ենք առնում նորածիններից:  
Կարմրուկը. — Յեթե մանուկը կամ մատը քերծի,  
Դիֆտերիտը. — ...կամ կեղտոտ նի բան թե  
բերանն ածի, ...  
Յերկուսով միասին. — ...մենք հենց կեղանք  
հետ բկից կուլ կերթանք  
ու բացիներիս տաք անկուն կտանք:  
Յեխը և Փոշին. — Գլուղ ու քաղաք և ամեն  
տեղ

ապրում ենք մենք՝ փոշի ու ցեխ.  
Վորտեղ ցեխը, վորտեղ փոշի,  
բացին ենտեղ քեֆ կքաշի:  
Յեխ ու փոշի վարակիչ են,  
Թող վոր մարդիկ փոշի շնչեն:  
Ել, բացիներ, մեզ հետ և գուք,  
վոր կոտորենք ծեր ու մանուկ:  
Բացին երը. — (Խմբովին) Մեր վճիռը շատ դրա-  
կան:

մենք աշխարհին տեր-տիրական.  
աղքատների համար մանգաղ,  
հնձենք, հնձենք, լցնենք դագաղ:  
Աղտոտ-կեղտոտ մութ թաղերում,  
նեղ ու խոնավ ոթախներում  
ապրեն, աճեն միշտ նորածիլ  
հաղարհագար կծիկ բացիլ:

Մեզ թշնամի բժիշկ ու գեղ,  
մեզ թշնամի — ջուր ու արև:  
Մաքուր ողը հո կա ու կա,  
և բոլորը մեզ ահ ու մահ.  
բայց լամփ են և — չեն ձանաչում  
մեզ գյուղերում, զավոդներում.  
մեր դեմ կովի և վոչ մի զենք.  
մենք ել նրանց խնալող չենք:  
Ֆիզկուլտուրան — Հաղթությունը հո հեշտ  
բան չի,  
ինչ եք դարձել դուք դունաչի.  
այս, բացեք դուք խոր վերքեր.  
հիմա տեսեք կոփվը մեր.  
յես գալիս եմ, ուռա, ուռա...  
իմ անունն ե Փիզկուլտուրա:  
Լսէք, լսէք դուք իմ կանչս,  
բացիներիդ գլխին շանչս.  
ինձ ոգնական արև ու ոդ,  
նաև մաքուր ջուրը մեզ մոտ.  
քաղհան կանենք մենք ծլից-ծիլ  
թե հին, թե նոր ամեն բացիլ:  
Ոգը. — Ա՛յ բացիներ, ատում ենք ձեզ —  
ֆիզկուլտուրան և մեկ ել յես.  
լուսամուտից ներս կխուժեմ,  
հիվանդ մանկանց միշտ կբուժեմ:  
Բուրը. — Մաքուր ողում, տղերք, տղերք,  
պիոներներ, և խաղ, և յերգ, —

մեզ են կանչում կարմիր, կանաչ  
 դաշտեր, ձորեր, սար, սարալանջ:  
**Զուրը.** — Յեթե կուղեք՝ առողջ մնաք,  
 պետք ե ջրով ձեզ լվանաք.  
 բացիլներին ջարդեք կովով  
 վոչ թե հում, այլ յեփած ջրով:  
 Ջրով, սապնով վարակման դեմ՝  
 առողջություն պիտի գտնեք.  
 յեփած ջուրը բացիլի դեմ.  
 յեփած ջրով նրան խեղեք:  
**Արեի** ճառագայթը. — Հեյ բացիլներ, կան-  
 գնեք լրիվ  
 արևն. յելավ ձեր դեմ կոփի,  
 պիոներներ, գեղի վերև,  
 շողերիս հետ դեպի արև,  
 Դուք ել, դուք ել մի-սի արեգ,  
 դուք ել ինձ հետ կոփի արեք,  
 փոր չթողնենք վոչ մի բացիլ,  
 տեղից հանենք արմատ ու ծիլ:  
**Բոլորը.** — Դեհ, ո՞ն առաջ, ուռա, ուռա,  
 մենք ու արև ֆիղկուլուրա.  
 բացիլները շատ են, անթիվ,  
 մենք նրանց դեմ կոփի խոփի,  
 նրանց մի լավ ջարդենք, բրդենք,  
 փոր իմանան՝ տղամարդ ենք:  
 Մեզ ճանաչենք, առողջ մնանք,  
 թե թույլ յեկանք, առողջ գնանք:

**Բացիլները.** — (Գլխակոր)  
 Կորանք, կորանք ու կորսվանք,  
 եսպես անհույս մենք ուր գնանք.  
 մեր հայրերը կորան, մեռան,  
 վորտեղ ման գանք, նրանք թռան:  
 Ֆիղկուլուրան ուժ ե լրիվ.  
 ինչպես դուրս գանք դեմք կոփի.  
 պիտի անի մեզ ջարդ ու փուրդ,  
 պիտի գզի մորթի ու բուրդ:  
**Թոքախտը.** — (Կանգնած ե վճռական)  
 Մեր գիրքերը, վոչ, չենք տա մենք,  
 մինչև վերջը կոփի կանենք:  
**Բոլորը.** — Զենք վախենում կովից, վեճից,  
 մենք ամուր ենք պիստ արձիճից:  
**Ճառագայթը.** — (Վառելով զիսիլն ելեկուրամ-  
 պը յեվ ուղղելով դեպի բացիլները)  
 Յեթէ առաջ գաս, բացիլ ժողովուրդ, ...  
**Բոլորը.** — ...անպատճառ կանենք մենք քեզ ջարդ  
 ու փուրդ:  
 (Բացիլները հավաքվում են՝ կազմելով մի անձեվ  
 մասսա):  
 (Լուս յեվ մեռած պատկեր):  
**Ճառագայթը.** — Զենք յերգի նրանց վրա թաղ-  
 ման յերգ,  
 լավ ե առաջուց տղերանց հայտնենք:  
**Բոլորը.** — Վոչ թե ուկերին, այլև եծերին  
 հայտնենք ջոջերին, նրանց մեծերին:

Ուր.—Հել, հալըեր, հիշեք:

Ֆիզկուլտուրան.—Որենք ե, որենք՝

առողջությունը աչքի պես պահենք:  
Վախեք ու փախեք զեխից ու կեղադից,  
եղ բնից, տնից չար բացիների:

Բուրը.—Խոնավությունից, փոշուց ու վոջից,  
հիվանդություններ տարածողներից:

Ֆիզկուլտուրան.—Տանը, դաշտում, դազգաւա-  
հի մոտ,

Զուրը.—...առավոտից մինչ առավոտ:

Ճառագայթը.—Մալը ու աղջիկ կազմ ու  
պատրաստ:

Բուրը.—Պետք ե, պետք ե լինենք զգաստ:

ու կյանքի մեջ գնենք իմաստ:  
ցավերի դեմ կոխվ, կոխվ,

բացիներին տանք ցաք-ցրիվ,

սարեր, ձորեր կարմիր-կանաչ,

մեզ հետ ոդ, ջուր, արև, ճաճանչ.

կանչենք նրանց մեզ ոգնության,

մենք թշնամի հիվանդության:

Կանցնի ձմեռ, կզա գարուն,

կլովի մեր յերգը սիրուն.

թե թշնամի, թե բարեկամ

մեր մեծ գործը լավ կիմանան:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

## ՑԱՆԿ

b2

Բնմագրության տեխնիկան (Ընդհանուր  
ցուցմունքներ) . . . . .

3

### Պիոներական կենգանի լրագրեր

Լենին . . . . .	17
Հաշվեավություն բանակի մասին . . . . .	22
Հոկտեմբերի ուղին . . . . .	31
8 մարտի . . . . .	36
Մայիսմելյան . . . . .	57
Սովորիք . . . . .	39
Չորրորդ որենքը . . . . .	49
Կեցցե առողջությունը . . . . .	62

ՀՀ Ազգային գրադարան



NL0139173

14886



ԳԻՒԾ 20 ս.